ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 հոկտեմբերի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

144
(3175)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԺԳՈՀՈՒԹՅԱՆ ԱԼԻՔ ԿԱ

Վերջին ամիսներին ոստիկանության համակարգում նկատվում են ներքին լուրջ լարվածություններ եւ դժգոհություններ:

Բանն այն է, որ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը, որ համակարգի քաղաքականության մշակման պատասխանատուն է, ունի տեսական գիտելիքներ, եւ երբեմն պրակտիկ ոստիկաններին ուղղակի չի հասկանում, եւ տեսությունն ու պրակտիկան համակարգում բախվում են իրար: Նախարարը բանիմաց է, կարդացած, տեսությունը լավ գիտի, բայց ոստիկանները պրակտիկ կյանքում նրա պատկերացրած թեորիաները չեն կարողանում գործի դնել, աշխատել:

«Ժողովուրդ» օրաթերթի հավաստի աղբյուրների փոխանցմամբ, բարձրաստիճան մի շարք սպաներ ներքին միջավայրում բարձրաձայնում են, որ համակարգում տիրող իրավիճակն այլեւս անտանելի է, չեն կարողանում աշխատել. նրանք դժգոհ են ինչպես աշխատանքային պայմաններից, այնպես էլ իրենց գործի քաղաքականացված եւ անարդյունավետ դարձած բնույթից:

Ըստ նույն աղբյուրների՝ ոստիկանները հաճախ ստիպված են գործել ոչ թե մասնագիտական պարտականություններից ելնելով՝ այլ քաղաքական իշխանության, մասնավորապես՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրապարակային հայտարարությունների, սոցիալական ցանցերում արված գրառումների, կամ նույնիսկ ուղարկված հրահանգային հաղորդագրությունների հիման վրա: «Մենք ամեն ինչ անում ենք՝ վերեւից եկող հանձնարարությունները կատարելու, հանցավորության դեմ պայքարի համար, բայց արդյունքում ո՛չ իշխանությունն է գոհ, ո՛չ հասարակությունը», - նշում են ոստիկանության բարձրաստիճան ներկայացուցիչները «Ժողովուրդ»-ի հետ մասնավոր զրույցներում:

Միեւնույն ժամանակ, պաշտոնական վիճակագրությունը եւս վկայում է, որ իրավիճակը համակարգում բարելավման միտումներ չունի: Ազգային վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների համաձայն՝ 2018-2024 թվականների ընթացքում հանցագործությունների ընդհանուր թիվը աճել է շուրջ 63 տոկոսով, իսկ մարդու դեմ ուղղված հանցագործությունները՝ 50 տոկոսով: Սա, ըստ փորձագետների, լուրջ ազդակ է. իրավապահ համակարգը բախվում է կառավարման եւ արդյունավետության խորքային խնդիրների:

Նման պայմաններում ոստիկանության որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ, ըստ մեր տեղեկությունների, քննարկում են համակարգից հեռանալու տարբերակը: «Շատերն այլեւս չեն կարողանում ինքնագոհ աշխատել, քանի որ զգում են՝ արդյունքը չի արդարացնում ջանքերը», - փոխանցում է «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրը:



Վերջին օրերին սոցիալական ցանցերում նոր «թրենդ» է առաջացել. իշխանական պատգամավորները հերթով ցուցադրում են իրենց «աշխատանքային» գործուղումները՝ մի քիչ Ժնեւում, մի քիչ Փարիզում, մի քիչ էլ սպասվող հանգստի հաջորդ վայրերում: Իսկ նրանց վայելքների գլխավոր հովանավորը ՀՀ հպարտ հարկատուն է: Օրինակ՝ ՔՊ-ական պատգամավոր Հասմիկ Հակոբյանը այս օրերին գտնվում է Շվեյցարիայում: Նա այդ մասին չմոռացավ տեղեկացնել հանրությանը լուսանկարի ուղեկցությամբ: Պատասխան արձագանքն էլ չուշացավ. առողջապահության նախկին նախարար, ներկայումս սոցիալական հարցերի պատասխանատու Արսեն Թորոսյանը մեկնաբանեց՝ «Վայելեք իմ փոխարեն»: Իսկ տիկին պատգամավորը, ակնհայտ լավ տրամադրությամբ, պատասխանեց. «Հաջորդ անգամ միասին կվայելենք»: Այսինքն՝ հաջորդ գործուղման ծրագիրը, կարելի է ասել, արդեն հաստատված է: Թեմային շտապեց միանալ նաեւ ՔՊ-ական մյուս «տուրիստը»՝ գործուղումների ամենաշատ մեկնողներից Սարգիս Խանդանյանը, ով հումորով գրեց, որ այս անգամ չի հասցրել Շվեյցարիա գնալ, բայց «մյուս անգամ անպայման կմիանա»: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ պաշտոնական հաշվարկներով՝ պատգամավորի մեկ գործուղման վրա պետական բյուջեից ծախսվում է առնվազն կես միլիոն դրամ, իսկ որոշ դեպքերում՝ մի քանի անգամ ավելի: Եվ երբ այդ գործուղումները վերածվում են լուսանկարների հավաքածուի ու վայելքների, հասարակությունը, բնականաբար, սկսում է հարցնել՝ արդյոք սա՞ է այն աշխատանքի արդյունքը, որի համար ժողովուրդն է վճարում պատգամավորին: ՔՊ-ում, թերեւս, դեռ չեն որոշել՝ ինչպես են համատեղելու պետական գործուղումները եւ հանգիստը, բայց մի բան հստակ է. «վայելել» բառը նրանց բառապաշարում վաղուց փոխարինվել է «աշխատել» բառով, որպեսզի լուրջ ստացվի: Իրականում նրանք պետության միջոցներով վայելում են կյանքը:

Երեկվանից Երեւանում մեկնարկել է «Ակադեմիական քաղաք Հայաստան. գիտելիքի միջազգային ֆորում» միջոցառումը, որի կարեւորությունը, ըստ ամենայնի, հասկանում է միայն ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ինչպես նաեւ Վրաստանի եւ մի շարք այլ երկրների կրթության ու գիտության ոլորտների նախարարներ: Պանելային քննարկումների ժամանակ, այնուամենայնիվ, միջազգային պատվիրակները, որոնք եկել են «ստուգելու» Հայաստանի՝ «գիտության նոր մայրաքաղաքի» կարգավիճակը, վայելել են Հայաստանը: Նրանց հրավիրելու, դիմավորելու, կեցության եւ ճանապարհածախսը հոգացել է ՀՀ Կառավարությունը: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզեց, որ գերշքեղ «Դվին» համալիրում կազմակերպված երկօրյա միջոցառման համար ծախսվել է մոտ 159.4 մլն դրամ, ինչը կազմում է գրեթե 421 հազար ԱՄՆ դոլար: Մեկ ելույթի համար՝ պարզապես խոսքի ու բառերի դիմաց, հյուրերին վճարվել է 400-600 հազարական դրամ, Լոնդոնից 8 մասնակից է ելույթ ունեցել, որոնց վճարվել է 4.8 մլն դրամ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը իր ելույթն ունեցել է առանց ՁԼՄ-ների, մինչդեռ հանրությունը ցանկանում է իմանալ՝ ինչ է ստացել Հայաստանը այս ֆորումից՝ բացի գունագեղ PowerPoint-ի սահիկաշարից ու պատրաստված թեյ-սուրճի սեղաններից: ***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***



Համաձայն ՀՀ Սահմանադրության 123-րդ հոդվածի՝ (1.) Հանրապետության նախագահը պետության գլուխն է: Հանրապետության նախագահը հետեւում է Սահմանադրության պահպանմանը: Իր լիազորություններն իրականացնելիս անաչառ է եւ առաջնորդվում է բացառապես համապետական եւ համազգային շահերով: Իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով: Սակայն, ի հեճուկս օրենսդրության, ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի միակ գործառույթը հանդիպումներն են, պարգեւատրումները եւ գործուղումները: Այս գործառույթների շրջանակում Խաչատուրյանը հոկտեմբերի 20-ին մասնակցում էր «Ակադեմիական քաղաք Հայաստան. գիտելիքի միջազգային ֆորում» երկօրյա համաժողովին: Համաժողովի ընթացքում ելույթով հանդես եկավ նաեւ ՀՀ նախագահը, ով խոսեց ոչ թե ֆորումից, այլ Նոբելյան Կոմիտեի կողմից շնորհված տնտեսագիտության բնագավառի մրցանակակիրներից: Նախագահը մեկ տող անգամ չխոսեց Ակադեմիական քաղաքի ստեղծման, իրագործման հեռանկարի, կարեւորության մասին: Նախագահի ելույթից հետո լրագրողները, այդ թվում՝ «Ժողովուրդ» օրաթերթի թղթակիցը, փորձեցին նրանից պատասխաններ ստանալ երկրում ստեղծված իրավիճակի մասին, սակայն նա նշեց, որ ֆորումին չի եկել, որ խոսի, օրինակ, սրբազանների կալանավորումից: ***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԵՍ-Ը ՇԱՏ Է ԱՅՍՕՐ, ԱՅՆ ՊԵՏՔ Է ԵՐԿՐՈՐԴ ՊԼԱՆ ՄՂՎԻ», ՇՈՂԵՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

««Ժողովուրդի» հարցերը» հաղորդման շրջանակում «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Չորրորդ իշխանություն» թերթի խմբագիր, գրող Հրանտ Մաթեւոսյանի դուստր Շողեր Մաթեւոսյանի հետ:

-Տիկին Մաթեւոսյան, Դուք, լինելով հանրության կողմից սիրված եւ ճանաչված գրող Հրանտ Մաթեւոսյանի դուստրը, երկար ժամանակ է հանդես չեք գալիս հանրային ակտիվությամբ: Այս օրերին լռությունը շռայլություն չէ՞:

-Ո՞ւմ համար շռայլություն, եթե կոնկրետ ասեիք...

-Եվ Ձեզ, եւ հանրության համար:

-Չեմ կարծում: Այսօր այնքան շատ են խոսողները, որ խոսքի իսկական արժեքը կարծես կորել է:

-Բայց չե՞ք կարծում, որ հանրությունը ունի Ձեզ նման մարդկանց խոսքի կարիքը:

-Չգիտեմ՝ ունի՞, թե՞ ոչ: Այսօր բոլորը խոսում են՝ թե՛ կարեւոր, թե՛ անկարեւոր, թե՛ երրորդական մարդիկ: Աղմուկը չափազանց շատ է, եւ ես չեմ կարծում, որ անպայման պետք է խոսել: Այն, ինչ անում է «Չորրորդ իշխանություն»-ը, բավական է. մենք գրում ենք, տպագրում, եւ ով դրա կարիքը զգում է, ընթերցում է: Իսկ ով ոչ՝ ընտրում է իր նախընտրած տեղեկատվական դաշտը:

-Ըստ Ձեզ՝ լսո՞ւմ են «Չորրորդ իշխանությանը»:

-Ամեն մեկն իր համար ընդունելի լրատվամիջոցն ունի: Մենք չենք լռում. պարզապես խոսում ենք մեր հրապարակումների միջոցով, այսինքն՝ միջնորդավորված ձեւով:

Հանրությունը, անկասկած, լուրջ խոսքի կարիք ունի, բայց այսօր այն քաղաքական խոսքը, որը կարող է համախմբել հասարակությունը, չի ձեւակերպվում: Յուրաքանչյուրն իր փոքր շահերից, ամբիցիաներից է ելնում: Հասարակությունը նույնքան պառակտված է, որքան քաղաքական ուժերը: «Ես»-ը չափազանց շատ է դարձել: Իսկ միասնության համար «Ես»-ը պետք է երկրորդ պլան մղել: Եթե դա չեն կարողանում, պետք է հեռանան քաղաքականությունից եւ տեղը զիջեն նրանց, ովքեր ավելի ճկուն են ու արդյունավետ: Կարեւոր է նաեւ նպատակը. արդյոք այն իշխանափոխությո՞ւնն է, հեղափոխությո՞ւնը, թե՞ պարզապես քաղաքական դաշտում ներկայություն ապահովելը:

-Ինչպե՞ս կգնահատեք Նիկոլ Փաշինյանի գործունեությունը: Սպասելի՞ էր, որ Հայաստանը կհայտնվի այս իրավիճակում, եւ նա կխոսի «Չորրորդ Հանրապետության» գաղափարի մասին:

-Ցավոք, ինձ համար սպասելի էր: Նման զարգացումներ կանխատեսելի էին դեռեւս 2017-ից, ոչ թե միայն 2018-ից: Միայն այսքան ծանր իրավիճակը՝ ոչ: Բայց գործողությունների տրամաբանությունը հենց դա էր: Թող մարդիկ սին հույսեր չունենան՝ Փաշինյանը չի փոխվելու: Ընտրությունները արդեն իսկ կեղծվում են, եւ ոչ թե քվեախախտումներով, այլ ուրիշ մեխանիզմներով: Ներկայում իշխանությունը ձգտում է չեզոքացնել բոլոր օջախները՝ վախի մթնոլորտ ստեղծելով, քաղաքական հետապնդումներով, որպեսզի ընտրություններին չլինի որեւէ իրական հակակշիռ:

-Ընդդիմությունը նրան «դավաճան» եւ «հողատու» է անվանում, իսկ Փաշինյանի կողմնակիցներն էլ մեղադրում են երեք նախկին նախագահներին՝ նրա ձախողումներում: Ո՞ւմ եք ավելի շատ մեղավոր համարում:

-Այդ հարցին պետք է քաղաքական գործիչները պատասխանեն: Ես չեմ ուզում կրկնել ասվածը:

-Իսկ ընդդիմության մեղավորությունը որտե՞ղ եք տեսնում:

-Առաջին հերթին՝ միասնության բացակայության մեջ: Նրանք չեն կարողանում իրենց անձնական հավակնությունները մի կողմ դնել եւ միավորվել: Երեք նախագահներն էլ ունեն խելացի համախոհներ. նրանցից պահանջվում է ստեղծել մի ուժեղ միասնական ճակատ, որտեղ առաջին պլանում իրենք չեն լինի: Այդ դեպքում հնարավոր կլինի գործել Հայաստանի բարօրության համար:

Հարցազրույցն ամբողջությամբ՝ ArmLur.am կայքում:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Հոկտեմբերի 21-ին մեկնարկած Ազգային ժողովի նիստի օրակարգում ընդգրկված էր «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագիծը, որը նախատեսում է գործող օրենքով նախատեսված հանրային հեռարձակողների թիվը նվազեցնել՝ հասցնելով երկուսի՝ միեւնույն ժամանակ վերացնելով նաեւ կրթական-մշակութային ուղղվածության ծրագիր պարունակելու պահանջը: Այս մասին հայտարարություն է տարածել Հայաստանի ժուռնալիստների միությունը:

«Ակնհայտ է, որ այս փոփոխության իրական պատճառը «Շողակաթ» հեռուստաընկերությանը հանրային հեռարձակողների ցանկից դուրս թողնելու իշխանության որոշումն է, ինչի սպասարկմանն էլ ուղղված է մակերեսային հիմնավորումներով խորհրդարան բերված օրենքի նախագիծը:

Հանրային հեռարձակողների կազմում կատարվող այս փոփոխությունը գործող իշխանության կողմից Հայ Առաքելական եկեղեցու դեմ վարվող պայքարի տրամաբանական շարունակությունն է, ինչի հիմքերը դրվել էին շատ ավելի վաղ՝ երբ բացահայտորեն սկսվել էր ազգային արժեքների, հայկական ինքնության դեմ ամենաբարձր մակարդակով հովանավորվող քարոզչությունը: Ամենակեղտոտ քաղաքական նպատակադրումներով «Շողակաթ» հեռուստաընկերության դեմ ուղղված այս քայլը բազմապատիկ դատապարտելի է այն դեպքում, երբ Հայ Առաքելական եկեղեցու հետ օրգանապես կապված հեռուստաընկերությունը պահպանել է իր քաղաքական զսպվածությունն ու բացառապես հոգեւոր-մշակութային, կրթական ուղղվածությունն անգամ ՀԱԵ-ի դեմ ամենալկտի գործողությունների պայմաններում:

Այսօր՝ Հանրային հեռարձակողների կազմից դուրս թողնելով «Շողակաթ» հեռուստաընկերությանը, իշխանությունը լուծում է ոչ միայն Եկեղեցուն եւս մեկ հարված հասցնելու իրավիճակային խնդիր, այլեւ փորձում է սահմանափակել եզակի հեռուստաընկերությանը սփռումը, որը հետեւողականորեն զբաղված է հոգեւոր, ազգային արժեքների պահպանմամբ ու պրոֆեսիոնալ մատուցմամբ: Այն, ինչը հակոտնյա է գործող իշխանության որդեգրած անարժեք, հակաազգային քաղաքականությանը:

Հայաստանի ժուռնալիստների միությունը խստորեն դատապարտում է «Շողակաթ» հեռուստաընկերության դեմ ուղղված ակնհայտ քաղաքական իշխանությունների այս քայլը եւ պահանջում է հետ կանչել օրինագիծն Ազգային ժողովից: Միեւնույն ժամանակ լրագրողական համայնքին, մամուլի ազատության հարցերով զբաղվող կազմակերպություններին հորդորում ենք գործուն միջոցներով պաշտպանել «Շողակաթ» հեռուստաընկերության՝ Հանրային հեռարձակողների շարքում մնալու իրավունքը», - ասված է հայտարարության մեջ:

ՄԻՔԱՅԵԼ ՍՐԲԱԶԱՆԻ ԴԱՏԱՎՃՌԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դատախազությունը բողոքարկել է Միքայել սրբազանի վերաբերյալ կայացված դատավճիռը պատժի մասով եւ Վերաքննիչ քրեական դատարանից խնդրել է նշանակել պատիժ՝ ազատազրկում 2 տարի 6 ամիս ժամկետով:

Հիշեցնենք դատարանը Միքայել սրբազանին դատապարտել էր 2 տարի ազատազրկման:

«Պաշտպանական թիմի կարծիքով՝ դատախազությունը հապշտապ կերպով բողոք ներկայացնելով փորձելու է «վերահսկել» վերաքննիչ քրեական դատարանի նախընտրելի դատավորների նշանակման գործընթացը եւ վերաքննիչ դատարանի կողմից գործի արագ հանգուցալուծումը»,- գրում է պաշտպանների թիմը:

ԳԻՆԵՎԵՏՈՒՄ ԼՍՈՒՄՆԵՐԸ ԼԱՐՎԱԾ ԱՆՑԱՆ

Վեդի համայնքի Գինեվետ գյուղում հոկտեմբերի 13-ին տեղի էին ունեցել նախնական հանրային լսումներ՝ «Օրդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կարմիր սարի կրաքարային մերգելների օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ:

Սա հանրային քննարկումների առաջին փուլն էր:

Ըստ նախագծի հեղինակների՝ նախատեսվում է 25 միլիոն դրամի ներդրում, որը անհրաժեշտության դեպքում կարող է աճել մինչեւ 35 միլիոն դրամի: Սակայն «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ լսումները անցել են լարված մթնոլորտում:

Համայնքապետարանի որոշ աշխատակիցներ հանդես են եկել կողմնակալ հայտարարություններով, այդ թվում՝ Շամո Բաքոյանը, որի եղբորորդին խորհրդարանում զբաղվում է մարդու իրավունքների պաշտպանությամբ:

Լսումների ժամանակ նա խոչընդոտել է համայնքում այգիներ հիմնած ներդրող Գեւորգ Ավագյանին՝ թույլ չտալով նրան հարցեր տալ, բարձրաձայն բղավելով՝ «Դու կարաս գնաս քո Դանիայում էդ ամեն ինչը անես, կարաս հենց հիմա էլ գնաս»:

Շամո Բաքոյանը հանդիսացել է հանրային լսման պատասխանատուն: Վիճաբանությունը վերածվել է լեզվակռվի, ինչից հետո միջամտել են պարեկային ծառայության աշխատակիցները:

Բացի դրանից, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արտաշատի համայնքապետ Կառլեն Մկրտչյանը նամակով դիմել է Արարատի մարզպետին՝ հայտնելով, որ համայնքապետարանը աջակցում է հանքարդյունաբերության ծրագրին: Այս հանգամանքը փաստում է, որ հանքի շահագործման նախաձեռնությունը խրախուսվում է իշխանական ուղղակի ազդակներով:

«Կորիզ» երիտասարդական եւ համայնքային զարգացման կենտրոն ՀԿ-ի նախագահ Արփինե Խաչատրյանը, որը ներկա է եղել լսումներին, պատմել է.

«Լսումներին կարծես հատուկ բերվել էին մարդիկ՝ հանքի դեմ խոսողներին ծաղրելու, անեծքներ տալու, վարկաբեկելու ու զրպարտելու նպատակով: Քաղցրաշենի եւ Այգեզարդի բնակիչներին ասում էին, թե նրանք Երեւանից են եկել ու վաճառված են: Երբ բարձրացվում էին կենսաբազմազանությանը սպառնացող վտանգների հարցերը, հնչում էին ծաղրական արտահայտություններ՝ օրինակ՝ «էդ կակաչը բերքատվությունը բարձրացնո՞ւմ ա»՝ նկատի ունենալով կարմիրգրքային նրբագեղ հիրիկը, կամ՝ «տուրիզմը մեր երկրին ի՞նչ ա բերելու», «նաղդը թողած՝ ընկնենք նիսյայի հետեւից»: Ի դեպ, Վերջին արտահայտությունն արել էր Նոր Ուղու վարչական շրջանի ղեկավարը»:

Այս ամենը վկայում է, որ հանքի շահագործման հարցում իշխանական եւ տեղական մարմինները գործի են դրել բոլոր միջոցները՝ նույնիսկ հանրային դիմադրությունը ճնշելու գնով:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՋՈՂՎԵԼ Է ԿԵՂԾԵԼ ՊԱՏԵՐԱԶՄԸ». ԸՆԴԴԻՄԱԴԻՐ

«Հայաստանի ներկայիս իշխանություններին հաջողվել է կեղծել մի ամբողջ պատերազմ: Այնպես որ, ինչ-որ ձայնագրություն կեղծելը նրանց համար ոչինչ է»:

Այս մասին հոկտեմբերի 21-ին Ազգային ժողովի նիստում հայտարարել է ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ագնեսա Խամոյանը՝ մեկնաբանելով Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանի ձերբակալումն ու դրան հաջորդած կալանավորումը:

Խոսելով իրավապահ մարմինների «ձեռքբերումների», մասնավորապես՝ անօդաչու թռչող սարքերի հետախուզության մասին, Խամոյանը, մասնավորապես, հարցրել է ներքին գործերի փոխնախարար Արմեն Մկրտչյանին. «Ո՞ւր էին ձեր անօդաչու թռչող սարքերը, երբ սպանում էին ընդդիմությունը ներկայացնող համայնքի ղեկավարին»:

Պատգամավորի խոսքով՝ իշխանությունները, ի տարբերություն շարքային քաղաքացիների, գտնվում են լիակատար անվտանգության մեջ:

«Վարչապետ Նիկոլ Փաշինյանն այս պահին Հայաստանի ամենապաշտպանված մարդն է: Մինչդեռ մեր քաղաքացիները մոռացված են եւ լքված՝ ճակատագրի քմահաճույքին», - ասել է խորհրդարանականը:

ՄՈՎՍԵՍ ՀԱԿՈԲՅԱՆԸ ԴԵՄ Է ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ 1.5 ՏԱՐԻ ԴԱՐՁՆԵԼՈՒՆ

«Ժամկետային զինծառայության ժամկետը կրճատելու որոշմանը բացասական եմ վերաբերվում»:

Այս մասին երեկ՝ հոկտեմբերի 21-ին, «Նյուզ.էյէմ» լրատվականի հետ զրույցում ասել է գլխավոր շտաբի նախկին պետ գեներալ-գնդապետ Մովսես Հակոբյանը՝ անդրադառնալով Նիկոլ Փաշինյանի հայտարարությանն այն մասին, որ 2026 թվականի հունվարի մեկից ժամկետային զինծառայության ժամկետը կրճատվելու է:

Ճշտող հարցին՝ ի՞նչ խնդիրներ, հետեւանքներ կարող է ունենալ զինված ուժերի համար այս որոշումը՝ Մովսես Հակոբյանն այսպես է արձագանքել. «Կրկնում եմ՝ բացասական եմ վերաբերվում: Մնացած ենթադրությունները դուք արեք»:

Հիշեցնենք, որ պաշտպանության նախարարությունն ավելի վաղ հայտնել էր, որ պատրաստվում են 2026 թվականի հունիսի 1-ից կրճատել ժամկետային զինծառայության ժամկետը: Սակայն Փաշինյանը հայտնել էր, որ որոշում են կայացրել հունվարի 1-ից կրճատել ժամկետային զինծառայության ժամկետը:

ՀՈՎԻԿ ԱՂԱՋԱՐՅԱՆԸ՝ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ ՔԱՅԼԵՐԻ ՄԱՍԻՆ

«ՓԱՇԻՆՅԱՆԸ ՈՉ ԹԵ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ԱՅԼ ՊԱՌԱԿՏՈՒՄ Է ԵԿԵՂԵՑԻՆ»

«Ժողովուրդ» օրաթերթը իշխանությունների կողմից եկեղեցու դեմ իրականացվող քայլերի վերաբերյալ զրուցել է Ամ ողջամավոր Հովիկ Աղազարյանի հետ:

-Պարոն Աղազարյան, վերջին շրջանում իշխանությունների կողմից ակնհայտորեն թիրախավորվում են սրբազաններն ու հոգեւորականները: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը պարբերաբար հայտարարում է Վեհարանը վեհափառից ազատելու մտադրության մասին՝ այդ մասին գրառումներ անելով նաեւ սոցիալական ցանցերում, շրջանառելով իր՝ «Վեհարանը վեհին» ձեւակերպումը: Արդեն երեք սրբազան հայր կալանավորված է, մի քանի հոգեւորականներ էլ ձերբակալվել են՝ տարբեր անհարմարություններ կրելով: Ինչպե՞ս եք վերաբերվում այս ամենին:

Նիկոլ Փաշինյանը ստում է: Նա նպատակ չունի «վեհարանը վեհին տալու»: Իր իրական նպատակը բոլորովին այլ է: Չնայած՝ իր այս «աշխատանքը» որոշ առումով դրական արդյունք էլ ունեցավ, քանի որ հանրությունը ճանաչեց Տեր Արամ քահանայի նման հոգեւորականի, որը դարձավ դավաճանության եւ անմարդկայնության խորհրդանիշ:

Շնորհակալություն Փաշինյանին, որ հնարավորություն տվեց բացահայտելու նման մարդկանց:

Եթե մարդն իրենից ինչ-որ բան է ներկայացնում, պետք է վաղուց բարձրաձայներ եկեղեցու խնդիրների մասին: Բայց նա դա չի արել, որովհետեւ իր նպատակը եկեղեցին բարեկարգելը չէ: Փաշինյանը փորձում է պառակտել Հայ Առաքելական Եկեղեցին, քանի որ այդ քայլերը կարող են հանգեցնել նրան, որ ինքը այստեղ «կաթողիկոս» նշանակի ինչ-որ մեկին, իսկ Հայաստանից դուրս գտնվող հայ առաքելական մեր եկեղեցիները հրաժարվեն ենթարկվել այստեղի կաթողիկոսությանը:

Այսպիսով կարող է ձեւավորվել մի նոր կառուցվածք՝ ինչպես Կիլիկիո կաթողիկոսությունն է, եւ Հայաստանը կպարփակվի ինքն իր մեջ:

Այդ ամենի հետեւանքով կստեղծվի Փաշինյանի պատկերացրած «Իրական Հայաստանը», որը, ըստ էության, հիմք կհանդիսանա ցնորածին Չորրորդ Հանրապետության՝ իր իսկ կողմից հղացված գաղափարի իրագործման համար:

Այս ամենից բխող հետեւանքները կարող են շատ վտանգավոր լինել: Եթե Փաշինյանի մղումները իսկապես ազնիվ լինեին, նա դեռ հինգ-վեց տարի առաջ կբարձրաձայներ եկեղեցու խնդիրների մասին եւ կփորձեր լուծել դրանք: Իսկ հիմա նա դա անում է միայն մեկ նպատակով՝ վերացնելու երրորդ հանրապետությունը եւ ձեւավորելու չորրորդը, ինչը լուրջ սպառնալիք է պետության եւ մեր ինքնության համար:

-Իսկ ի՞նչ է, ըստ Ձեզ, այս ամենի հիմքում: Ոմանք ասում են, թե նա պարզապես իրագործում է Ադրբեջանի կրոնական թեմի առաջնորդ Փաշազադեի գաղափարները: Դա հնարավո՞ր է:

-Կարծում եմ՝ այդտեղ կա ճշմարտության հատիկ: Չեն կարող այդքան համընկումներ լինել պատահական: Կամ ուղղակի երկու կողմերն էլ նույն գիծն են հետապնդում, եւ այդ պատճառով են նմանվում նրանց գործողություններն ու տեսակետները:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԱՀԱՑԵԼ Է ԳԵՂԱՄԱՍԱՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ

Մահացել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Գեղամասար բնակավայրի վարչական ղեկավար Արմեն Ավետյանը: Տեղեկությունը հայտնում է Վարդենիսի համայնքապետարանը:

«Ցավով եւ խորը վշտով հայտնում ենք, որ կյանքից անժամանակ հեռացել է Վարդենիս համայնքի Գեղամասար բնակավայրի վարչական ղեկավար Արմեն Մակիչի Ավետյանը:

Արմեն Մակիչի Ավետյանը ծնվել է 1995 թվականի սեպտեմբերի 18-ին:

2001-2012 թվականներին հաճախել է Գեղամասարի միջնակարգ դպրոց:

2013 թվականի զորակոչվել է Հայոց բանակ: 2017-2019 թվականներին աշխատել է Գեղամասարի համայնքապետարանում, որպես առաջին կարգի մասնագետ (օպերատոր):

2019-2022 թվականներին նշանակվել է Գեղամասար համայնքի Գեղամասար բնակավայրի վարչական ղեկավար:

2022-2025 թվականներին՝ Վարդենիս համայնքի Գեղամասար բնակավայրի վարչական ղեկավար:

Ամուսնացած էր, ունի 3 անչափահաս երեխա:

Մեր ցավակցությունն ու զորակցությունն ենք հայտնում Ավետյանի ընտանիքի անդամներին, հարազատներին, ընկերներին՝ մեր սիրելի գործընկերոջ եւ ընկերոջ կորստի կապակցությամբ:

Թո՛ղ հոգիդ լույսերի մեջ սավառնի, մեր լա՛վ ընկեր ....

Տեղեկացնում ենք, որ հոգեհանգիստը տեղի կունենա հոկտեմբերի 21-ին, իսկ հուղարկավորությունը՝ հոկտեմբերի 22-ին»:

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ ՏԵՐ ԱՐԱՄ ՔԱՀԱՆԱ ԱՍԱՏՐՅԱՆԸ

ArmLur.am-ին երեկ Մայր Աթոռից հայտնեցին. «Հոկտեմբերի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Արամ քահանա Ասատրյանը:

Տնօրինության համար հիմք է ծառայել Արագածոտնի թեմի առաջնորդի զեկուցագիրը եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Պարգեւների շնորհման եւ կարգապահական հարցերի հանձնախմբի եզրակացությունն առ այն, որ Տ. Արամ քահանա Ասատրյանը՝

ա/ Հրապարակային ելույթներով ու հայտարարություններով վարկաբեկել է Հայ Եկեղեցին, Թեմական առաջնորդին եւ ծառայակից եկեղեցականներին,

բ/ Անտեսելով Թեմական Առաջնորդի հորդորներն ու հրահանգները՝ հարատեւել է կարգազանց ընթացքի մեջ,

գ/ Վերջին մեկ ամսվա ընթացքում պատարագներին կամայականորեն զեղչել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Թեմական Առաջնորդի անունների հիշատակության հատվածը՝ այդ քայլով, ըստ էության, իրեն դուրս դնելով Եկեղեցուց,

դ/ Երիցս համառել է ներկայանալ Հանձնախմբի նիստերին՝ շրջանցելով վերջինիս հեղինակությունն ու իրավասությունները, ինչպես նաեւ իր անարգալից վարքագծով դրժել հնազանդության ուխտը:

Կարգալույծ եկեղեցականն այսուհետեւ կդասվի աշխարհականների շարքին՝ Ստեփան Ասատրյան ավազանի անունով»:

Նշենք, որ Կաթողիկոսի այս որոշումից հետո Տեր Արամը իր ֆեյսբուքյան էջով հայտարարեց, որ կիրակի օրը մարդկանց հրավիրում է պատարագի. «Սիրելի հավատացյալ քույրեր եւ եղբայրներ, կիրակի օրը հրավիրում եմ բոլորիդ Սուրբ Հովհաննավանք՝ մասնակցելու Սուրբ եւ Անմահ Պատարագին: Սուրբ Պատարագը կմատուցեմ ես՝ Ձեր Տեր Արամ քահանան:

«Ցավոք ոչ առաջինն եմ եւ ոչ էլ վերջինը կլինեմ»: Հայտնի ձայնագրության մեջ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախկին գավազանակիրը Կարգապահական հանձնախմբի նախագահի հետ իր խոսքն ավարտում է այս կարեւոր հայտարարությամբ, որն այսօր առավել քան արդիական է եւ ես էլ վերջինը չեմ լինի ցավոք:

Երեկ առավոտյան Կարգապահական հանձնախմբին եմ ներկայացրել նամակ, որով պատրաստակամություն եմ հայտնել հանդիպելու Հանձնախմբի հետ (մինչ այդ շուրջ մեկ ամիս խնդրել եմ ինձ ներկայացնել Հանձնախմբի հետ հանդիպելու նպատակը) եւ իմ նամակը ստանալուց հետո՝հրապարակվում է հայտնի «տնօրինության» որոշումը:

Այժմ ունենք այն, ինչ ունենք», - գրել էր Տ. Արամը, որն այսուհետեւ կկրի իր աշխարհիկ անուն-ազգանունը՝ Ստեփան Ասատրյան:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԴԱՏԱՐԱՆԸ ԲԱՎԱՐԱՐԵՑ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԸ ԵՐԿՈՒ ԱՄՍՈՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

Երեկ՝ հոկտեմբերի 21-ին, դատարանը որոշում կայացրեց Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանին կալանավորել երկու ամսով:

Հիշեցնենք՝ Հակակոռուպցիոն կոմիտեն հայտարարություն էր տարածել, որ «Հաշվի առնելով Գյումրի համայնքի մի խումբ պաշտոնատար անձանց կողմից կաշառք ստանալու, վերջիններիս կաշառք տալու, ինչպես նաեւ նույն պաշտոնատար անձանց կողմից խմբի կազմում, նախնական համաձայնությամբ իրենց լիազորությունները չարաշահելու առերեւույթ հանցագործությունների դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթով հանրային մեծ ինչեղությունն ու լրատվամիջոցների կողմից վարույթն իրականացնող մարմնին հասցեագրված բազմաթիվ հարցումները՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն տեղեկացնում է, որ ձերբակալված ութ անձանցից հինգի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել դատարան, որոնցից համայնքի ղեկավարի նկատմամբ ընտրվել է կալանք, կաշառք տվողներից մեկի նկատմամբ՝ տնային կալանք, իսկ մյուսների մասով քննությունը շարունակվում է: Պաշտոնատար անձանց մասով կայացվել են նաեւ պաշտոնավարումը կասացնելու մասին որոշումներ»:

Հակակոռուպցիոն կոմիտեն հերքել էր մամուլում տարածված այն պնդումները, թե Գյումրի համայնքի ղեկավարի մասնակցությամբ հրապարակված ձայնագրությունները կեղծ են կամ չեն առնչվում նրա անձին: Կոմիտեն նշել էր, որ Գյումրի համայնքի ղեկավարը իր ցուցմունքում ո՛չ հերքել, ո՛չ էլ հաստատել է տվյալ բովանդակությամբ զրույց ունենալու փաստը, ինչպես նաեւ չի հայտնել, թե ձայնագրություններում իր ձայնը կեղծված կամ փոխված է: Փոխարենը, ըստ Կոմիտեի, Ղուկասյանը ներկայացրել է ի՛ր մեկնաբանությունները եւ պարզաբանումները տվյալ զրույցների վերաբերյալ:

«Բացի դրանից, քրեական վարույթի շրջանակներում հարցաքննված մի շարք անձինք տվել են խոստովանական ցուցմունքներ՝ հաստատելով օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված փաստական տվյալների հավաստիությունը:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է», - նշված էր հայտարարության մեջ:

Հիշեցնենք, որ Գյումրու քաղաքապետարանում իրականացված խուզարկությունից հետո Վարդան Ղուկասյանը ձերբակալվեց, իսկ հաջորդ օրը կալանավորվեց: Նշենք, որ նա համարվում է ընդդիմադիր համայնքապետ:

Այս առիթով հոկտեմբերի 20-ին Հակակոռուպցիոն կոմիտեի շենքի մոտ էին հավաքվել նրա բազմաթիվ համակիրներ, որոնք բողոքում էին կալանավորման որոշման դեմ եւ եկել էին աջակցելու Ղուկասյանին:

Երեկ՝ առավոտյան, «Ժողովուրդ» օրաթերթը Քննչական կոմիտեից տեղեկացավ նաեւ, որ «Զանգվածային անկարգություններին մասնակցելու, արդարադատության իրականացմանը խոչընդոտելու հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում 33 անձ է ձերբակալվել»:

Նշենք, որ ձերբակալված անձինք Վարդան Ղուկասյանի կողմնակիցներն են, որոնք նախօրեին Գյումրու քաղաքապետարանի դիմաց էին հավաքվել՝ իրենց աջակցությունը հայտնելու քաղաքապետին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԱՐԱԲԿԻՐԻ ԹԱՂԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Երեկ՝ հոկտեմբերի 21 ին, իրավապահները մտել են Արաբկիրի թաղապետարան եւ տարբեր աշխատակիցների են ձերբակալել:

Հակակոռուպցիոն կոմիտեն հաստատեց. «Քննվող քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել են Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմի համապատասխան բաժնի նախկին գլխավոր մասնագետը եւ ստորաբաժանումներից մեկի ղեկավարը՝ խմբի կազմում կաշառք տվողի օգտին ապօրինի գործողության համար կաշառք ստանալու մեղադրանքներով»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԹՄՐԱՄԻՋՈՑ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Համայնքային ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հոկտեմբերի 17-ին Արամ Խաչատրյան փողոցում հայտնաբերել, ապօրինի թմրանյութ պահելու, օգտագործելու կասկածանքով ձերբակալել եւ բաժին են տարել մայրաքաղաքի բնակիչ 29-ամյա մի երիտասարդի:

Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են 2 գլանակ, որոնցից մեկը՝ կիսամոխրացած հետքերով, մյուսը՝ բուսական զանգվածով, 1,28 գրամ մարիխուանա, մոտ 1 գրամ կոկաին եւ գաղտնի փականով դանակ:

29-ամյա երիտասարդն ու կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Ի՞ՆՉ Է ՊԱՐԶՎԵԼ ՎԱԼՈԴՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ

Մերձավանում տեղի ունեցած սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում ստացվել է դատագենետիկական փորձաքննության եզրակացությունը, համաձայն որի՝ կատարված խուզարկության ժամանակ հայտնաբերված իրերի, մասնավորապես՝ հեռադիտակի մակերեսից եւ ուսապարիչից, կարմիր գույնի ձեռնոցներից անջատված ԴՆԹ-ները համընկնում են Գ.Հ.-ին բնորոշ գենետիկական բնութագրին: Այս մասին երեկ հայտնեցին մեզ Քննչական կոմիտեից:

Հիշեցնենք, սեպտեմբերի 23-ին սպանվեցին Փարաքարի համայնքապետ Վալոդյա Գրիգորյանը եւ քրեական ոստիկան Կարեն Աբրահամյանը: Գործով ձերբակալված է 2 անձ:

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂԻ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Քրեական ոստիկանության Լոռու մարզային վարչության ծառայողները, համագործակցելով մարզի պարեկային գումարտակի ծառայողների հետ, հոկտեմբերի 20-ին Վանաձոր քաղաքի Բաղրամյան փողոցում հայտնաբերել, ձերբակալել եւ վարչություն են տեղափոխել վանաձորցի 33-ամյա մի երիտասարդի:

Նա հուլիսի 19-ից հետախուզվում էր ավազակության եւ հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառության մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք:

33-ամյա երիտասարդը տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀՐԴԵՀԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՄԱՐԴ Է ՄԱՀԱՑԵԼ

Երեկ՝ հոկտեմբերի 21-ին, խոշոր հրդեհ եւ ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 14:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության 9-11 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Հրաչյա Ներսիսյան փողոցի թիվ 8-րդ շենքի 2-րդ հարկի բնակարաններից մեկի պատուհանից ծուխ է դուրս գալիս, հաղորդում է Shamshyan.com-ը:

Դեպքի վայր են ժամանել Երեւանի թիվ 5-րդ հրշեջ-փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ:

Տեղում պարզվել է, որ հրդեհը բռնկվել է 2-րդ հարկի բնակարանում եւ հրշեջները, պատուհանից մտնելով տուն արել են կրակը, իսկ բազմոցին հայտնաբերել են անգիտակից վիճակում գտնվող տղամարդու:

Օպերատիվորեն ժամանած Երեւանի 1-03 շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը ինչքան էլ փորձել է փրկել այդ տղամարդուն, ցավոք, չի հաջողվել:

Բժիշկներն արձանագրել են նրա մահը:

Տեղում պարզվել է, որ մահացածը նույն հասցեի բնակիչ 1956 թվականին ծնված Արթուր Ս.-ն է:

Դեպքի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզվում է բնակարանի սեփականատիրոջ եւ մահացածի ինքնությունը:

Օպերատիվորեն ժամանել են նաեւ «Գազպրոմ Արմենիա», «Տրանսգազ», Երեւանի ԳԳՄ-ի աշխատակիցները, տեղում ոստիկաններն ու պարեկները պարզել են, որ շենքն ու այրվող բնակարանը գազիֆիկացված են, սակայն բնակարանում երկար ժամանակ գազամատակարարումը դադարեցված է եղել:

Ըստ նախնական տեղեկությունների՝ հրդեհը առաջացել է ծխախոտից, քանի որ մահացածի ձեռքին հայտնաբերվել է ծխախոտ:

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՀՈԳԵՄԵՏ ԴԵՂԱՀԱԲԵՐ Է ՊԱՀԵԼ

Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ծառայողները, իրացնելով Քրեական ոստիկանության Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության օպերատիվ տեղեկությունները, «Զվարթնոց» օդանավակայանի տարածքում հայտնաբերել, ձերբակալել եւ Համայնքային ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի բաժին են տարել մի օտարերկրյա քաղաքացու:

Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 53 հոգեմետ դեղահաբ:

Նախաձեռնված քրեական վարույթը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 20-ից 21-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 119 դեպք, որից 10-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԽԱՌԸ ԻՐԱՎԻՃԱԿ՝ ԴՊՐՈՑԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հուլիսի 21-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել Տավուշի մարզում հանրակրթական դպրոցների շենքերի շինարարության վերաբերյալ: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Այրումի միջնակարգ դպրոցի նկուղային հարկի աշխատանքները ավարտված են, ընթանում են առաջին հարկի աշխատանքները: Ընթանում է նաեւ Սեւքարի միջնակարգ դպրոցի հիմքերի կառուցման աշխատանքները: Սկսվել է Աղավնավանքի եւ Նորաշենի միջնակարգ դպրոցների նկուղային հարկերի շինարարական աշխատանքները: Առաջիկա տասնօրյակի մեջ Գոշի եւ Նավուրի միջնակարգ դպրոցների շինարարական աշխատանքները կմեկնարկեն: Կոթիի, Արծվաբերդի թիվ 1, Այգեձորի եւ Ոսկեվանի դպրոցների շինարարական աշխատանքները դեռեւս միջմրցութային ընթացքի մեջ են: Նոյեմբերյանի միջնակարգ դպրոցի շինարարական աշխատանքները մեկնարկվել են, իսկ Կողբի թիվ 1 միջնակարգ դպրոցի հողամասի ընտրության հետ կապված հարցերը քննարկման փուլում են»: Հոկտեմբերի 13-ին տեղեկատվական նոր հարցում ենք կատարել Տավուշի մարզպետին՝ հարցնելով. անցել է գրեթե 3 ամիս, նշված դպրոցներից յուրաքանչյուրի շինարարական աշխատանքները ի՞նչ փուլում են: Տավուշի մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Այրումի միջնակարգ դպրոցի աշխատանքները կատարվում են ըստ գրաֆիկի: Սեւքարի միջնակարգ դպրոցի նկուղային հարկի աշխատանքները ավարտված են: Ընթացքի մեջ են Աղավնավանքի եւ Նորաշենի միջնակարգ դպրոցների շինարարական աշխատանքները: Մեկ ամիս է արդեն մեկնարկել են Նավուրի միջնակարգ դպրոցի աշխատանքները: Գոշի միջնակարգ դպրոցի շինարարական աշխատանքների մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության նկատմամբ կա բողոք, որը ուսումնասիրման փուլում է: Կոթիի, Արծվաբերդի թիվ 1, Այգեձորի եւ Ոսկեվանի դպրոցների շինարարական աշխատանքների մրցութային ընթացքը կմերկնարկվի 2026 թվականին: Նոյեմբերյանի միջնակարգ դպրոցի շինարարական աշխատանքները ընթացքի մեջ են: Կողբի թիվ 1 միջնակարգ դպրոցի համար ընթանում են ոչ տիպային նախագծային աշխատանքներ»:

ՎԱՌԵԼԱՓԱՅՏ ՉՈՒՆԵՆ

Աշունը կիսվել է, արեւոտ օրերն անցել են, իսկ Տավուշի մարզում նոր են սկսել մարզի անտառտնտեսությունների կողմից սահմանամերձ գյուղերի սոցիալապես անապահով ընտանիքներին մինչեւ 8 խորանարդ մետր ինքնապատրաստումով թափոն վառելափայտի հատկացումը: Սկսվել է աշնանային անձրեւների սեզոնը, անտառային ճանապարհները ցեխոտվել, տրանսպորտային միջոցների համար դժվարանցանելի են դարձել: Սահմանամերձ, անտառամերձ գյուղերի բնակիչները հիմա պետք է սպասեն արեւոտ եղանակի, որպեսզի անտառային ճանապարհները չորանան, կամ տրանսպորտային հավելյալ ծախսեր կատարելով՝վարձեն փայտ տեղափոխող ավելի հզոր տեխնիկա, որպեսզի անտառի խորքից, ցեխոտ, դժվար հաղթահարելի ճանապարհներով պատրաստած թափոնը տեղափոխեն իրենց առանձնատներ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՎԵՐՋ ՀԱՅԱՍՏԱՆ ԵԿՈՂ ԲԵՌՆԵՐԻ ՏԱՐԱՆՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՆ

ՈՎՔԵՐ ԵՆ ՈՂՋՈՒՆԵԼ ԱԼԻԵՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւի հետ համատեղ ասուլիսի ժամանակ հայտարարել է, որ Ադրբեջանը վերացրել է դեպի Հայաստան բեռների տարանցման բոլոր սահմանափակումները:



Նշենք, որ այս հայտարարությանը «արձագանքեց» ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը՝ նշելով, որ ողջունում է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հայտարարությունը՝ դեպի Հայաստան բեռների տարանցման սահմանափակումների վերացման վերաբերյալ:

Նա պատասխանել է «Արմենպրես» լրատվականի հարցին՝բարձր գնահատելով Ադրբեջանի եւ Ղազախստանի իր գործընկերների ներդրած ջանքերն ու այդ ուղղությամբ իրականացված աշխատանքը:

-Պարոն Գրիգորյան, ինչպես կմեկնաբանեք Ադրբեջանի նախագահի՝ Հայաստանի ուղղությամբ բեռնափոխադրումների սահմանափակումների վերացման վերաբերյալ հայտարարությունը:

-Ինչ խոսք, ուրախ եմ եւ ողջունում եմ Ադրբեջանի Հանրապետության նախագահի որոշումը՝ Հայաստանի ուղղությամբ բեռնափոխադրումների սահմանափակումների վերացման վերաբերյալ:

Հիշեցնենք, որ Ալիեւը այս մասին մանրամասնել էր. «Ցանկանում եմ նշել, որ Ադրբեջանը վերացրել է բոլոր սահմանափակումները դեպի Հայաստան բեռների տարանցման համար: Այդպիսի առաջին տարանցումը եղել է ղազախական ցորենի տեղափոխումը Հայաստան: Կարծում եմ, որ սա նաեւ լավ ցուցիչ է այն բանի, որ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղությունն արդեն ոչ միայն թղթի վրա է, այլ նաեւ գործնական արտահայտում ունի»:

Հայաստանի էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանն էլ իր հերթին ուրախությամբ նշել է. «Շուտով Ակտաու-Բաքու, այնուհետեւ ադրբեջանական եւ վրացական երկաթգծով Հայաստան կմտնի ղազախական ցորենի առաջին խմբաքանակը»:

Թեեւ հայտարարությունները ներկայացվում են որպես տարածաշրջանային տնտեսական համագործակցության քայլ, փորձագետների շրջանում հարցեր են առաջացել՝ արդյոք Հայաստանի բեռների մուտքը Ադրբեջանի տարածքով չի վերածվի նոր քաղաքական կախվածության կամ ճնշման գործիքի:

Քննադատներն ընդգծում են, որ նման տարանցիկ սխեմաներում գերիշխում են ոչ թե տնտեսական շահերը, այլ քաղաքական նպատակահարմարությունը, ինչն էլ Հայաստանի համար կարող է ստեղծել նոր ռիսկեր՝ հատկապես երբ տնտեսական ուղիները պայմանավորված են Բաքվի ցանկություններով: Իսկ էկոնոմիկայի նախարարը, որ հրճվում է ներկրումներից, պետք է հիշի, որ ՀՀ տնտեսական զարգացման պատասխանատուն է, ոչ թե ներկրումների:

Ի դեպ, Գեւորգ Պապոյանն անկարող է լուծել հայկական բեռնատարների հարցը, որոնց շուրջ 300 վարորդներ հավաքվել էին Կառավարության մոտ, հիմա էլ ՀՀ-Վրաստան անցակետի մոտ անգործ կանգնած են:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԳԱՐԵԳԻՆ Բ–ԻՆ ՄԵՆԱ՞Կ ԹՈՂԵՑ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԴԵՄ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն Հայաստան է գործուղել Շահան արքեպիսկոպոս Սարգսյանին՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ բանակցություններ վարելու նպատակով: «Մեր ձեւով» շարժման ղեկավարը հայտարարեց, որ եկել են բանակցելու վարչապետի հետ, որպեսզի նա դադարեցնի ճնշումները եւ Կաթողիկոսի գահընկեցության ակցիան: Այս տեղեկությունը տարածվեց այն բանից հետո, երբ հրապարակվեցին Կառավարության կողմից տարածված լուսանկարներ՝ վարչապետի եւ ՀՀ նախագահի հանդիպումներից: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայ Առաքելական Եկեղեցու շրջանակներում անհանգստություն է նկատվում այն փաստի առիթով, որ Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն, կարծես, բավարար ջանքեր չի գործադրում՝ կանխելու Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի դեմ իրականացվող ճնշումները: Նշվում է, որ այս պահին Հայաստանի Հանրապետությունում կալանքի տակ են գտնվում երեք թեմական առաջնորդներ՝ Միքայել եւ Բագրատ արքեպիսկոպոսները, ինչպես նաեւ եպիսկոպոս Պռոշյանը: Կարճ ասած՝ ըստ եկեղեցական աղբյուրների, Կիլիկիո Տան Կաթողիկոսությունը, կարծես, որոշ չափով հեռու է մնացել Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Նիկոլ Փաշինյանի իրականացրած ռեպրեսիաների դեմ պայքարից՝ կողմերի միջեւ գոյություն ունեցող երկարամյա անհամաձայնությունների պատճառով: Այս ֆոնին հատկանշական է, որ երեկ կաթոլիկ եկեղեցում էլ Փաշինյանը ջերմ ընդունելության արժանացավ. հաղորդություն ստացավ, մոմ վառեց, հանդիպեց Հռոմի պապի հետ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՎԱՐՈՐԴՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՄՆԱԼ ՍԱՀՄԱՆԻՆ

Բեռնափոխադրում իրականացնող մեքենաների վարորդները շարունակում են մնալ «Բավրա», «Բագրատաշեն», «Գոգավան» հայ-վրացական սահմանային անցակետերում:

Նրանք ArmLur.am-ին երեկ փոխանցեցին, որ թեթեւ մարդատար ավտոմեքենաների համար բաց են պահելու ճանապարհը, ինչպես երեկ, սակայն արգելելու են բեռնափոխադրում իրականացնող մեքենաների ելքն ու մուտքը:

«Գիշերը քննարկեցինք ու որոշեցինք, որ այսօր էլ ճանապարհները բաց պահենք մարդատար մեքենաների համար, սակայն բոլոր բեռնատարները շարունակելու ենք այստեղ կանգնեցրած պահել: Հայաստանի տնտեսությունը կաթվածահար ենք անելու: Այս պահի դրությամբ 300-400 «ֆուռ» կա ստեղ կանգնած ու ներկրում չենք անելու Հայաստան՝ մինչեւ չհասկանան, թե ինչքան կարեւոր է մեր խնդիրը մեզ համար, մեր գործը՝ իրենց: Մենք ենք երկրի ցորենը բերում, ձեթը, մակարոնեղենը... Ո՞րը ասեմ: Մենք ենք այս երկիրը պահում, բայց մեր հացը կտրում են», - ArmLur.am լրատվականի հետ զրույցում ասաց վարորդներից մեկը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՑ ԿԲՌՆԱԳԱՆՁԵՆ 1,2 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄԻ ԳՈՒՅՔ

Վաղարշապատ խոշորացված համայնքի ղեկավարի ընտրություններից առաջ ՀՀ Դատախազությունը պատժի գործիքները գործի է դրել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ վաղամեռիկ գեներալ, «Երկրապահ կամավորական»-ի նախագահ Մանվել Գրիգորյանի ժառանգներից եւ նրան փոխկապակցված անձանցից, հօգուտ ՀՀ-ի, նպատակ կա բռնագանձելու ավելի քան 1,2 միլիարդ դրամի գույք ու դրամական միջոց:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Դատախազության հայցապահանջը մասնակի բավարարվել է: Հայցադիմումի մերժված մասով ՀՀ գլխավոր դատախազությունը վերաքննիչ բողոք կներկայացնի:

● Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 11 պատահար, 11 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով:

Աճուրդի ընթացքում վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝ - ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն, Մաշտոցի պողոտա, 27 շենք, 9 հասցեում գտնվող 79,55 քմ բնակարան /առկա են ինքնակամ կառուցված 74,45 քմ ձեղնահարկ եւ 8,2 քմ կցակառույց/: Լոտի մեկնարկային գինը՝105000000 ՀՀ դրամ:

- ՀՀ, Սյունիքի մարզ, համայնք Քաջարան, Քաջարան ք., Շիրվանզադեի փողոց, 6 շենք, 42 հասցեում գտնվող 72,2 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 07.11.2025թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝30.12.2025թ.:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքեր:

Team Telecom Armenia Գ

4-ՐԴ ՏԱՐԻՆ ՇԱՐՈՒՆԱԿ ԱՋԱԿՑՈՒՄ Է Koreez ՄՐՑԱՆԱԿԱԲԱԽՈՒԹՅԱՆԸ

Ամփոփվել են Team Telecom Armenia-ի տեխնոլոգիական գործընկերությամբ անցկացվող Koreez մրցանակաբաշխության արդյունքները: Այս տարի առարկայական ծրագրերի եւ հատուկ ընտրված թեմաների հիման վրա ստեղծված ինտելեկտուալ մրցույթին մասնակցել է շուրջ 25 000 աշակերտ Հայաստանի Հանրապետության դպրոցներից:

«Կրթության ոլորտում կատարված յուրաքանչյուր ներդրում ներդրում է մեր երկրի ապագայում: Այդ է պատճառը, որ ոլորտի աջակցությունը մեզ համար՝ որպես հայկական օպերատոր, ռազմավարական նշանակություն ունի: Մենք կարեւորում ենք, որ որակյալ կրթությունը հասանելի լինի յուրաքանչյուր երեխայի, նպաստի նոր գիտելիքների ձեռքբերմանն ու օգնի աշակերտներին բացահայտելու եւ էլ ավելի զարգացնելու իրենց տաղանդները»,-ասում է Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

Team-ը նաեւ մրցանակներ է տրամադրել մրցույթում հաղթանակներ գրանցած երեք աշակերտների՝նպատակ ունենալով նպաստելու նորագույն տեխնոլոգիաների կիրառման միջոցով կրթության հասանելիության խթանմանը:

«Արդեն չորրորդ տարին է, ինչ մեզ աջակցում է մեր վստահելի գործընկերը՝ Team Telecom Armenia-ն, որը կանգնած է կրթական նորարար նախաձեռնությունների կողքին: Այս համագործակցությունը վերածվել է իրական կրթական շարժման, որը ոգեշնչում է հազարավոր երեխաների ամբողջ հանրապետությունից: Շուրջ 60 000 աշակերտ արդեն մասնակցել է Koreez-ի իրականացրած մրցույթներին: Նրանք ոչ միայն ցուցադրել են իրենց գիտելիքն ու տաղանդը, այլեւ բացահայտել են սեփական ներուժը՝ հավատալով, որ կարող են հասնել ավելիին: Շատերի համար այս ծրագիրը դարձել է իրական շրջադարձ՝ բացելով նոր հորիզոններ ու հնարավորություններ եւ ձեւավորելով ինքնավստահության այն զգացումը, որը հիմք է ապագայի հաջողակ, նախաձեռնող եւ կրթված սերնդի համար»,-ասում է Koreez մրցույթն անցկացնող «Նոր սերնդի դպրոց» հասարակական կազմակերպության նախագահ Սուրեն Ալոյանը:

Koreez-ն ստեղծվել է 2020 թվականին՝ ոլորտում ավելի քան 15 տարվա հաջողված ծրագրեր իրականացնելու փորձ ունեցող Dasaran կրթական ծրագրի թիմի կողմից: Մրցույթի թեստ-հարցաշարերը հիմնված են դպրոցական ծրագրի վրա:

Team Telecom Armenia-ի մասին

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին: Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱ

«ՍԼԱՅՄԵՐ»–Ը ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը վերահսկողական միջոցառումներ է իրականացրել Երեւան քաղաքում՝ համաձայն «Խաղալիքների անվտանգության ստուգման վերաբերյալ» ստուգաթերթի:

Իրականացվել է խաղալիքների նմուշառում, որի արդյունքում պարզվել է, որ «ՍԼԱՅՄԵՐ» տեսակի խաղալիքը չի համապատասխանում տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին եւ պարունակում է վտանգավոր բաղադրիչներ:

Արձանագրված խախտումները վերացնելու նպատակով Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոլյանի կողմից արձակվել են արտադրանքի խմբաքանակի իրացման կասեցման, հետկանչման եւ ոչնչացման վերաբերյալ կարգադրագրեր:

ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը հորդորում է բոլոր սպառողներին, ովքեր ձեռք են բերել նշված տեսակի խաղալիքները, կապ հաստատել Տեսչական մարմնի հետ եւ վերադարձնել դրանք՝ հետագայում երեխաների առողջությանը հասցվելիք վնասներից խուսափելու համար:

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿԸ՝ BACEE–Ի ԱԴԱՄԱՆԴԵ ՀՈՎԱՆԱՎՈՐ

Հոկտեմբերի 20-21-ը Վիեննայում կայանում է BACEE-ի հոբելյանական 50-րդ համաժողովը: Միջոցառման Ադամանդե հովանավորն է «Կոնվերս» բանկը:

Բանկի ֆինանսական տնօրեն, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ, BACEE-ի հոգաբարձուների խորհրդի անդամ Հրանտ Հակոբյանն այս կապակցությամբ նշում է. ««Կոնվերս» բանկի համար մեծ պատիվ է հանդես գալ որպես BACEE համաժողովի Ադամանդե հովանավոր: Վստահ ենք, որ այսօրվա փոխկապակցված աշխարհում նման հարթակները կարեւոր են ոչ միայն փորձի փոխանակման, այլեւ երկարաժամկետ, փոխշահավետ համագործակցության համար՝ հատկապես այնպիսի դինամիկ զարգացող շուկաներում, ինչպիսին մեր տարածաշրջանն է»:

Միջոցառումը միավորել է բանկային եւ ֆինանսական համակարգերի համաշխարհային առաջատարներին՝քննարկելու համար Կենտրոնական, Արեւելյան եւ Հարավարեւելյան Եվրոպայի, Բալթյան երկրների, Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի բանկային ոլորտների թվայնացման, ԱԲ կիրառման, զարգացման հարցերը, հիմնական ռիսկերն ու տարբեր տարածաշրջաններում դրանք նվազեցնելու ռազմավարությունները: Անդրադարձ է կատարվելու նաեւ BACEE-ի անդամ երկրներում նոր բիզնես հնարավորություններին:

Քննարկումներին «Կոնվերս» բանկը ներկայացրել եւ բանախոսությամբ են հանդես եկել բանկի գլխավոր գործադիր տնօրեն Անդրանիկ Գրիգորյանը եւ բանկի ֆինանսական տնօրեն, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ, BACEE-ի հոգաբարձուների խորհրդի անդամ Հրանտ Հակոբյանը:

Հրանտ Հակոբյանը նշում է. ««Կոնվերս» բանկը միայն ֆինանսական հաստատություն չէ: Մենք մեզ տեսնում ենք որպես կամուրջ, որը կապում է մեր հաճախորդներին նոր հնարավորությունների հետ, եւ միաժամանակ՝ հայկական տնտեսությունը՝ գլոբալ աշխարհի: Այս համաժողովը կամուրջ է գիտելիքի, փորձի եւ համագործակցության համար: Այն լիովին համահունչ է մեր առաքելությանը՝ լինել կայուն, հուսալի ու ռազմավարական ֆինանսական գործընկեր, որը կօգնի թե՛ մեր հաճախորդներին, թե՛ մեր երկրին՝ոչ միայն կառավարել տնտեսական աճը, այլեւ այն ուղղորդել, ամրապնդել եւ վերածել կայուն զարգացման»:

«Կոնվերս» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՄԱԽՄԲԵԼՈՎ ՀԱՅ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԴԻԶԱՅՆԵՐՆԵՐԻՆ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹԸ

Երեւանը հոկտեմբերի 23-26-ը կրկին կդառնա նորաձեւության կենտրոն. կանցկացվի «Երեւանի նորաձեւության շաբաթը» (Yerevan Fashion Week), որը մեկ հարկի տակ կհամախմբի հայ եւ միջազգային դիզայներների, ոլորտի մասնագետների, ազդեցիկ հյուրերի ու նորաձեւության սիրահարների: Նախագիծն իրականացնում է Հայաստանի նորաձեւության եւ հագուստի պալատը՝ Երեւանի քաղաքապետարանի եւ միջազգային գործընկերների աջակցությամբ:

Միջոցառման նպատակն է զարգացնել հայկական նորաձեւությունը եւ այն ճանաչելի դարձնել միջազգային հարթակներում՝ Երեւանը աստիճանաբար վերածելով նորաձեւության շաբաթ հյուրընկալող քաղաքներից մեկի: Քաղաքապետարանի մշակույթի եւ տուրիզմի վարչության պետ Արաքսի Խոյլունցի խոսքով՝ Նորաձեւության շաբաթը ոչ միայն դիզայներների համար է ստեղծում արտահայտվելու հնարավորություն, այլեւ խթանում է զբոսաշրջությունը. «Մենք հյուրընկալում ենք բազմաթիվ օտարերկրյա հյուրերի, եւ այս իրադարձությունը միավորում է մշակույթը, արվեստը, նորաձեւությունը՝ Երեւանը դարձնելով նորաձեւության մայրաքաղաք»:

Նորաձեւության եւ դիզայնի պալատի նախագահ Վահան Խաչատրյանը տեղեկացրել է, որ պաշտոնական բացումը տեղի կունենա հոկտեմբերի 23-ին՝ Հայաստանի ազգային պատկերասրահում, որտեղ նորաձեւությունը եւ արվեստը կհանդիպեն մեկ հարթակում: Հաջորդ օրերին դիզայներների ցուցադրություններն ու պանելային քննարկումները կանցկացվեն «Մերիդիան» ցուցահանդեսային կենտրոնում:

«Նոր անուններ բացահայտելու համար ստեղծել ենք հատուկ հարթակներ: Եթե առաջին տարում երիտասարդ դիզայներների մասնակցությունը համեստ էր, ապա այսօր դիմումների քանակը աճել է, եւ դա վկայում է ոլորտի զարգացման մասին»,- նշել է Խաչատրյանը՝ հավելելով, որ այս տարի մոտ 60 բրենդ է ներկայացված, ինչը լուրջ առաջընթաց է:

Fashion Scout Armenia երիտասարդ դիզայներների մրցույթի շրջանակում այս տարի ստացվել է 50 հայտ, որոնցից միջազգային ժյուրին ընտրել է ութ ֆինալիստի: «Բրիտանական խորհուրդը» կտրամադրի գլխավոր մրցանակը, իսկ իտալական Polimoda ինստիտուտը կընտրի լավագույնին՝ մեկամսյա վերապատրաստման հնարավորություն տալով Իտալիայում: Հաղթողին պարգեւը կհանձնվի Երեւանի քաղաքապետի կողմից՝ 1 միլիոն դրամ ֆինանսական աջակցությամբ: Բացի դրանից, Ղարաբաղից տեղահանված չորս մասնակիցների կտրամադրվեն դրամական մրցանակներ՝ իրենց բիզնեսը զարգացնելու նպատակով, GIZ-ի աջակցությամբ:

YFW 2025-ին կմասնակցեն ավելի քան 20 հայ եւ միջազգային դիզայներներ՝ ԱՄԷ-ից, Իրանից, Ղազախստանից, Ուզբեկստանից, Մոլդովայից, Ռուսաստանից: Նրանց հավաքածուները կներկայացնեն նորարարության, կայունության եւ մշակութային ինքնության թեմաները: Fashion Expo-ի տարածքում շուրջ 60 հայկական եւ միջազգային բրենդեր կներկայացնեն իրենց արտադրանքը՝ համագործակցության եւ վաճառքների նոր հնարավորություններ ստեղծելով:

Fashion Talks-ի քննարկումները կանցկացվեն շուրջ 15 թեմայով՝ ոճավորում, լուսանկարչություն, կայուն նորաձեւություն, SS եւ դիզայն, պորտֆոլիոների ստեղծում եւ այլն: Կկազմակերպվեն նաեւ հատուկ նախագծեր՝ CRELAB Տավուշ եւ Կոտայք կենտրոնների ցուցադրություններ, Pepsi x YFW մրցույթ, Denim Cycle ցուցահանդես, ինչպես նաեւ after party-ներ ու երեկույթներ՝ կապերի հաստատման նպատակով:

Նորաձեւության շաբաթը կարեւոր ազդեցություն ունի նաեւ զբոսաշրջության եւ տեղական արտադրության զարգացման վրա: Օտարերկրյա հյուրերի մասնակցությունը, նրանց լուսաբանումներն ու հրապարակումները նպաստում են Երեւանի միջազգային ճանաչմանը՝ ընդգծելով, որ մայրաքաղաքը պատրաստ է հյուրընկալել բարձրակարգ միջոցառումներ եւ դառնալ տարածաշրջանի նորաձեւության կարեւոր կենտրոն:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՆՈԱ»-Ն 688 ՄԼՆ ԴՐԱՄՈՎ ՁԵՌՔ Է ԲԵՐԵԼ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության գործող չեմպիոն Երեւանի «Նոա» ֆուտբոլային ակումբը 688 մլն դրամով ձեռք է բերել մարզադաշտի ու ենթակառուցվածքների հողատարածքը եւ 312 միլիոն դրամ նվիրաբերել Վաղարշապատ համայնքին:

Այս մասին հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը:

Ավելի վաղ ՀՀ կառավարությունը հավանություն էր տվել «Նոա» ֆուտբոլային ակումբի ներկայացրած՝ Վաղարշապատի մարզադաշտի եւ ֆուտբոլային ակադեմիայի ենթակառուցվածքների զարգացման ներդրումային ծրագրին:

Վաղարշապատ համայնքի ավագանու հաստատումից հետո իրականացվել է 23.8 հա մակերեսով հողատարածքի առքուվաճառքը համայնքի եւ «Նոա» ՖԱ-ի միջեւ:

«Նոա»-ն հողատարածքի դիմաց վճարել է շուրջ 688 մլն դրամ: Հոկտեմբերի 20-ին «Նոա» ՖԱ-ի եւ համայնքի միջեւ կնքվել է նվիրատվության պայմանագիր, որն օգտագործվելու է համայնքային ենթակառուցվածքների զարգացման նպատակով: Պայմանագրով «Նոա» ՖԱ-ն մոտ 312 մլն դրամ է նվիրաբերում Վաղարշապատ համայնքին: Այսպիսով՝ «Նոա»-ն ընդհանուր 1 միլիարդ դրամ է վճարել Վաղարշապատ համայնքին:

«Նոա» ֆուտբոլային ակումբ նախագահ Վարդգես Վարդանյանը հողատարածքի ձեռքբերումից հետո նշել է. «Սա հաջորդ քայլն է դեպի մեր երազանքը: Մենք մեր բոլոր քայլերի մասին կիսվելու ենք ֆուտբոլային հանրության հետ: Շնորհակալ ենք Վաղարշապատ համայնքին սերտ աշխատանքի համար: Առա՛ջ դեպի մեր նոր նպատակներ»:

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ 3 ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ Է

Հայաստանի սպորտային մարմնամարզության տղամարդկանց հավաքականի 3 ներկայացուցիչ դուրս է եկել աշխարհի առաջնության եզրափակիչ:

Ինդոնեզիայի մայրաքաղաք Ջակարտայում մեկնարկած աշխարհի առաջնության եզրափակիչ փուլում Հայաստանը կներկայացնեն Օլիմպիական խաղերի արծաթե եւ բրոնզե մեդալակիր, աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն Արթուր Դավթյանը (հենացատկ), Եվրոպայի չեմպիոն Համլետ Մանուկյանը (նժույգ-թափեր), երիտասարդների աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր Մամիկոն Խաչատրյանը (նժույգ-թափեր):

Եզրափակիչները կկայանան հոկտեմբերի 24-ին ու 25-ին:

ՇՈՈՒ ԲԻԶՆԵՍ

ԷՄԻՆԵՄԸ՝ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

52-ամյա ռեփեր Էմինեմը երջանկություն է գտել իր վաղեմի ընկերուհու հետ: Էմինեմը հանդիպում է հայտնի աստղերի ոճաբան Կատրինա Մալոտայի հետ: Հայտնում է Fast News-ը:

Ամերիկացի երգիչ, դերասան եւ պրոդյուսեր Էմինեմը զգուշորեն պաշտպանում է իր անձնական կյանքը հանրության աչքից: Սակայն Էմինեմի (Մարշալ Բրյուս Մաթերս III) մտերիմներից մեկը լույս է սփռել նրա նոր սիրավեպի վրա. 52-ամյա ռեփերը հանդիպում է ոճաբան Կատրինա Մալոտայի հետ:

Միչիգանում ծնված դիմահարդարը եւ վարսահարդարը վաղուց է ճանաչում երգչին: Նա տարիներ շարունակ աշխատել է Էմինեմի հետ նրա տեսահոլովակների եւ այլ նախագծերի առիթով: Հստակ չէ, թե երբ են նրանց մասնագիտական հարաբերությունները վերածվել ռոմանտիկ հարաբերությունների: Այնուամենայնիվ, ըստ ներքին աղբյուրի, Մարշալը գտել է իր երկար սպասված երջանկությունը Կատրինի հետ:

ՔԵՈՍԱՅԱՆԻ ՖԻԼՄԸ ԸՆԴԳՐԿՎԵԼ Է «ՈՍԿԵ ԱՐԾԻՎ» ՄՐՑԱՆԱԿԻ ՑԱՆԿՈՒՄ

Ռեժիսոր Տիգրան Քեոսայանի «Պյոտր Սեմյոնիչի յոթ օրը» ֆիլմն ընդգրկվել է «Ոսկե արծիվ» մրցանակի երկար ցանկում՝ «Լավագույն խաղարկային ֆիլմ» անվանակարգում: «Ալֆանյուզ»-ը գրում է, որ մրցանակաբաշխության արարողությունը տեղի կունենա 2026 թվականի հունվարի 30-ին «Մոսֆիլմ» կինոկոնցեռնում:

Այս տարի մրցույթն անցկացվում է 23 անվանակարգերում: «Լավագույն խաղարկային ֆիլմ» անվանակարգում ընդգրկվել է 40 ֆիլմ:

Տիգրան Քեոսայանի «Պյոտր Սեմյոնիչի յոթ օրը» ֆիլմը նկարահանվել է նախքան ռեժիսորի՝ ծանր հիվանդանալն ու կոմայի մեջ ընկնելը: Ֆիլմի սցենարը գրվել է Մարգարիտա Սիմոնյանի պատմվածքի հիման վրա:

Գլխավոր հերոսն Ադլերի 70-ամյա բնակիչ Պյոտր Սեմյոնիչն է, որը տագնապալի լուր է ստանում. նրա մոտ թոքերի քաղցկեղի կասկած կա: Ախտորոշման հստակեցումը՝ մեկ շաբաթ անց, եւ այդ ամբողջ ընթացքում նա ապրում է սպասման մեջ՝ խորասուզվելով հիշողությունների մեջ եւ հետեւելով ներկային:

Ֆիլմի գործողությունները ծավալվում են Կրասնոդարի երկրամասում:

● Հոկտեմբերի 26-ին՝ 14:00-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Երազանքի պահապանները» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-10.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են հողամասերի ընդհանուր սեփականության, ընդհանուր օգտագործման իրավունքները:

Սարիբեկ Սեդրակյան (59 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երկու կամ մի քանի անձանց մոտ սեփականության, օգտագործման ներքո գտնվող հողամասը նրանց է պատկանում համապատասխանաբար՝ ընդհանուր սեփականության, ընդհանուր օգտագործման իրավունքով:

Հողամասի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքը ծագում է երկու կամ մի քանի անձանց սեփականության իրավունքով այն հողամասն անցնելիս, որը չի կարող բաժանվել առանց դրա նպատակային նշանակության փոփոխման կամ օրենքի ուժով ենթակա չէ բաժանման, ինչպես նաեւ սեփականատերերի կողմից իրենց պատկանող հողամասերը կամովին՝ պայմանագրի հիման վրա մեկ հողամասում միավորելիս:

Օրենքներով եւ այլ իրավական ակտերով, հողաշինարարական եւ քաղաքաշինական փաստաթղթերով սահմանվում են հողամասերի նվազագույն չափերը, որոնցից ցածր չի թույլատրվում ընդհանուր սեփականությունից առանձնացնել հողամասեր (ըստ օրենքի՝ անբաժանելի հողամասեր):

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սեփականատերերից մեկին պատկանող շենքի, շինության վերակառուցումը չի հանգեցնում ընդհանուր հողամասում նրա բաժնի մեծացմանը՝ առանց մյուս սեփականատերերի համաձայնության:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որո՞նք են ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողների իրավունքները:

Նելլի Սաղաթելյան 19 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն ունեն իրենց երեխայի հետ համատեղ ապրելու եւ նրա դաստիարակությանը մասնակցելու իրավունքներ:

Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներից երեխա ծնվելու դեպքում, ինչպես նաեւ նրանց մայրությունը եւ (կամ) հայրությունը որոշելիս ծնողները ամուսնության տարիքը լրանալուց հետո կարող են ինքնուրույն իրականացնել ծնողական իրավունքները:

Մինչեւ անչափահաս ծնողների ամուսնության տարիքը լրանալը նրանց երեխայի համար կարող է նշանակվել խնամակալ, որը անչափահաս ծնողների հետ համատեղ կիրականացնի այդ երեխայի դաստիարակությունը: Երեխայի խնամակալի եւ անչափահաս ծնողների միջեւ առաջացած տարաձայնությունները կարգավորում է խնամակալության եւ հոգաբարձության մարմինը:

ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն իրավունք ունեն ընդհանուր սկզբունքներով ընդունելու կամ վիճարկելու իրենց հայրությունը եւ մայրությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հետաքրքիր կազմով այս պատկերագիրքը Ժան-Դավիդ Մորվանի եւ Թովմաս Չերքեզյանի «Միսաքը, Մելինեն եւ Մանուշյան խմբավորումը» պատկերապատված վեպի հայերեն թարգմանությունն է, որը «ՌԵԱ» 17-րդ միջազգային փառատոնի շրջանակում երեկ ներկայացվեց արվեստասերներին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 3 +12 + 16
Կոտայքի լեռներ	- 1 + 3 +12 + 15
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 8 +17 + 19
Գեղարքունիք	- 1 + 3 +12 + 16
Լոռի	0 + 4 +14 + 18
Տավուշ	+14 + 17 +6 + 10
Արագածոտնի լեռներ	- 2 + 3 +12 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 9 +17 + 21

Արարատ	+ 6 + 9 +20 + 22
Արմավիր	+ 6 + 10 +20 + 22
Վայոց ձորի լեռներ	0 + 3 +13 + 16
Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 9 +19 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 5 +15 + 19
Սյունիքի հովիտներ	+ 7 + 11 +19 + 22
ԼՂՀ	+ 8 + 12 +18 + 23
Երեւան	+ 7 + 9 +16 + 18

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.10.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*